



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**«ՀԻՂՐՈՑԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ»**  
**ՊԵՏԱԿԱՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**Հիդրոերկրաբանական տեղեկատվություն**  
(ստորերկրյա ջրային ռեսուրսներից ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար)

**Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց փողոցում Երևանի քաղաքապետարանի կողմից ոռոգման նպատակով նախատեսվող 1 (մեկ) հորատանցքի հորատման վերաբերյալ**

Հորատանցքը նախատեսվում է հորատել Երևան քաղաքի Արշակունյաց 42/3 և 44/3 շենքերի միջանկյալ մասի հետևյալ կոորդինատներում՝

$X=40^{\circ} 09' 01.35''$

$Y=44^{\circ} 29' 47.0''$

$H = 936$  մ

(Նշված կոորդինատները ըստ տարբեր GPS-ների կարող են տատանվել  $\pm 20$ մ սահմաններում)

Տարածքում օդի բազմամյա միջին տարեկան ջերմաստիճանը  $11.7^{\circ}\text{C}$  է, բազմամյա միջին տարեկան տեղումների քանակը՝ 302 մմ, գոլորշիացումը՝ 420 մմ:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են չորրորդական ժամանակակից գետահեղեղատային առաջացումները, որոնք ներկայացված են փուխր բեկորային և կավային նստվածքներով:

Նախագծվող հորատանցքին բնորոշ է հետևյալ երկրաբանական – հիդրոերկրաբանական կտրվածքը.

0.00 – 4.0    կավ, հոծ ( $Q_4$ )

4.0 – 23.0    գետաքար-գլաքար ( $Q_{3-4}$ )

23.0– 25.0    ավազակավ, անջուր ( $Q_{3-4}$ )

25.0- 64.0    գետաքար- գլաքար, խիճ, ավազ, ջրատար ( $Q$ )

64.0 - 90.0    կավ, ջրամերժ ( $N_2^1$ )

Ջրի մակարդակը հորատանցքում կվերականգնվի շուրջ 26.0մ խորությունում:

Հորատանցքը կարելի է հորատել 394մմ տրամագծով և ամրակապել 324մմ տրամագծի խողովակներով: Ամրակապող խողովակների սյան 30.0 - 60.0մ խորության միջակայքում պետք է տեղադրվի ծակոտկեն գտիչ:

Համաձայն տարածքում հորատված հորատանցքերի տվյալների, նախագծվող հորատանցքի տեսակարար ծախսը սպասվում է 2.5լ/վ.մ:

Հորատանցքի 65մ խորությունում կարելի է տեղադրել ՅԼԵ-8-25-70 մակնիշի խորքային պոմպ՝ 11.1լ/վ արտադրական հզորությամբ:

Ջրերի ջերմաստիճանը սպասվում է 15.0°C: Ըստ քիմիական կազմի տեղամասում տարածված են հիդրոկարբոնատային կազմի ջրերը, որոնց ընդհանուր հանքայնացումը մինչև 2.9գ/լ է, ընդհանուր կոշտությունը՝ 11.5մգ.համ/լ, ջրածնային ցուցիչը (pH)՝ – 6.7:

Նախատեսվող հորատանցքի համար նշված երկրաբանական-հիդրոերկրաբանական կտրվածքը, հիդրոերկրաբանական պարամետրերը, ջրերի ջերմաստիճանը և ջրատար հորիզոնների տեղադրման միջակայքերը նախագծային կամ սխեմատիկ են: Դրանք պետք է ճշտվեն հորատման ընթացքում ամրակապման ժամանակ ծակոտկեն զտիչի ճիշտ տեղադրման համար, իսկ փորձնական ֆիլտրացիոն աշխատանքների հիման վրա պետք է ընտրվի խորքային պոմպի տիպը և տեղադրման խորությունը:

Պատվիրատուն պարտավորվում է հորատման աշխատանքների ավարտից հետո փաստացի տվյալներով (կազմված և հաստատված հորատող կազմակերպության կողմից) ներկայանալ «Հիդրոոգերաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ՝ հորատանցքի անձնագիրը կազմելու և ստանալու համար:

Համաձայն Ջրային օրենսգրքի 19.1 հոդվածի հիդրոերկրաբանական մշտադիտարկումների վարումը պարտադիր է, որի համար հորատանցքում լրացուցիչ պետք է տեղադրվի 50մմ տրամագծի խողովակ՝ շուրջ 60մ երկարությամբ:

Կազմեց՝ հիդրոերկրաբ. հետազոտ. բաժնի պետ

Ա.Հակոբյան

Ստուգեց՝ գլխավոր հիդրոերկրաբան

Հ. Աղինյան

ՏՆՕՐԵՆ

ԼԱՐԻՉՅԱՆ





ՀՀ կառավարության 2003 թվականի  
մարտի 7-ի N 218-Ն որոշման  
Հավելված N 7

1 (մեկ) հորատանցքի հորատման վերաբերյալ

Ծանոթություն.- Կտրվածքում մեկնա՝ հիդրոէլեկտրակայան պատամետորը պետք է ճշգրտվեն հորատման ընթացում: Հարցը պետք է տեղադրվի ջրատար հորիզոնի միջակայքում, իսկ ջրիան Հորատանցքը պետք է բխակուրով, ջրի մակարդակի մշտադիտարկումներ իրականացնելու համար՝ 50մ տրամագծով խողովակով:

Լավանց՝ Հիդրոէլեկտրակայանի հիմնարկում:

Ստուգեց՝ գլխավոր հիշողության  
Հ. Հաճիկյան

Տնօրեն,

06.07.2023г.